Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. օգոստոսի 31-ի N 142 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի ոռոգման համակարգի վերակառուցումը: Հաշվի առնելով, որ ոռոգման համակարգը շատ հին է (կառուցվել է 1967թ.), և ոռոգման համար դժվարություններ են առաջացել շատ հին ու քայքայված լինելու պատճառներով, անհրաժեշտություն է առաջացել ամբողջովին վերակառուցել այն: Համակարգի վերակառուցման շնորհիվ ոռոգման համակարգը կդառնա ավելի արդյունավետ՝ այդպիսով նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը տվյալ համայնքում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) շահույթ չհետապնդող կազմակերպություն (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգտոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955թ., գրանցման թիվ՝ 0486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք Բնագավառը՝ ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 67,200,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի բնակիչներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է սկսել 2018 թվականի օգոստոսի 15-ին և ավարտել 2019 թվականի մարտի 31-ին:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ոռոգման համակարգի նախագծային աշխատանքներ՝ նախատեսվում է իրականացնել 2018 թվականի օգոստոսի 16-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 4,350,000 դրամի չափով: Ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքներ՝ նախատեսվում է իրականացնել 2018 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 62,850,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- ոռոգման համակարգի նախագծման ծառայություններ՝ 4,350,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի - ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքներ՝ 62,850,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Արագածոտնի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ